

Պ-910-26.03.2021-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն օրենքի նպատակն է ապահովել կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, ստեղծել բավարար իրավական երաշխիքներ և աջակցել ազգային ֆիլմերի ստեղծմանը, տարածմանը, ցուցադրմանն ու առաջխաղացմանը, կինոժառանգության և կինոտարեգրության պահպանմանն ու հասանելիության ապահովմանը:

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական քաղաքականության սկզբունքները, պետական աջակցության նպատակներն ու ձևերը, պետական և այլ մարմինների լիազորությունները, կարգավորում է կինեմատոգրաֆիական գործունեության իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները:

Հոդված 2. Կինեմատոգրաֆիայի մասին օրենսդրությունը

1. Կինեմատոգրաֆիայի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (այսուհետ՝ միջազգային պայմանագրեր), սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով (այսուհետ՝ օրենք) և սույն օրենքին համապատասխան ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով:

2. Եթե միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական միջամտության բացառումը

1. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է կինեմատոգրաֆիայի ոլորտում պետության կողմից ստեղծագործական գործընթացին միջամտելու բացառումը և երաշխավորում է ազատ ստեղծագործելու ու ինքնաարտահայտվելու հնարավորությունը:

2. Կինեմատոգրաֆիայի ոլորտում գրաքննությունն, այդ թվում՝ պետական աջակցության մեխանիզմների գործադրման միջոցով, արգելվում է:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **ազգային ֆիլմ**՝ կինոթատրոնում ցուցադրելու համար նախատեսված և սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված պայմանները բավարարող ֆիլմ.

2) **աջակցություն տրամադրող**՝ դրամագլխի համալրման, ֆիլմերի ստեղծման և տարածման նպատակով ֆինանսավորում հատկացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ով չի մասնակցում ֆիլմարտադրության գործընթացին, ձեռք չի բերում ֆիլմի նկատմամբ գույքային իրավունքներ և չի կարող ազդել ֆիլմարտադրողի որոշումների կայացման վրա.

3) **դասակարգում**՝ ֆիլմի տարբերակում՝ ըստ դիտողների տարիքային սահմանափակման չափորոշիչների.

4) **դրամագլուխ**՝ անձեռնմխելի կապիտալ, որը ձևավորվում կամ համալրվում է հիմնադրի ներդրումից, աջակցություն տրամադրողների կողմից տրամադրված միջոցներից և Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներից.

5) **ենթագրում**՝ ֆիլմում գործող անձանց արտահայտած խոսքի կամ մեկնաբանություն պարունակող տեքստի արտածում կադրում.

6) **լիամետրաժ ֆիլմ**՝ 52 րոպե և ավելի տևողություն ունեցող ֆիլմ.

7) **կարճամետրաժ ֆիլմ**՝ մինչև 52 րոպե տևողություն ունեցող ֆիլմ.

8) **կինեմատոգրաֆիա**՝ մշակույթի և արվեստի ոլորտ, որն իր մեջ ներառում է ֆիլմի ստեղծման, տարածման, ցուցադրման հետ կապված մասնագիտական, ստեղծագործական, արտադրական, տեխնիկական, գիտական և կրթական գործունեության ամբողջություն.

9) **կինոթատրոն**՝ համապատասխան տեխնիկական միջոցներով էկրանի վրա 50 և ավելի դիտողների համար ֆիլմի ցուցադրման մեկ կամ ավելի սրահ ունեցող վայր.

10) **կինոժառանգություն**՝ ժառանգված, պահպանված, հաջորդ սերունդներին փոխանցվող և հանրային սեփականություն հանդիսացող ֆիլմի հիմնանյութ, ֆիլմի բնօրինակ կամ դրա պատճեն, ֆիլմի ստեղծման համար անհրաժեշտ պարագաներ (բեմադրական իր, կահույք, հագուստ, սարք, սարքավորում, առարկա, կառույց), շարժական և անշարժ գույք.

11) **կինոռեժեսոր**՝ ազգային ֆիլմերի վիճակագրական հաշվառումը կազմակերպելու նպատակով ստեղծված տվյալների հիմնապահոց.

12) **կինոտարբերություն**՝ փաստավավերագրական նյութ, որում ժամանակագրական կարգով արտացոլված է իրողությունների կամ փաստերի հաջորդական պատկերում՝ դրանք հետագայում օգտագործելու նպատակով.

13) **կինոփառատոն**՝ մեկ և ավելի անվանակարգերում ընտրված ֆիլմերի ցուցադրման նպատակով մրցութային կամ ոչ մրցութային ծրագրով և հաստատված կանոնակարգով անցկացվող միջոցառում.

14) **կրկնօրինակում**՝ ֆիլմում գործող անձանց արտահայտած խոսքի վանկավոր արտասանության համաժամանակյա թարգմանության հնչյունագրում.

15) **համատեղ արտադրություն**՝ օտարերկրյա և Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրողների կողմից համատեղ իրականացվող և սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում նշված պայմանները բավարարող ֆիլմարտադրություն.

16) **հավաստագիր**՝ ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները նվազագույն չափավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.

17) **ծայնային ներկայացում**՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ֆիլմի դրվագների հակիրճ բանավոր նկարագրություն.

18) **մատակարար**՝ ֆիլմարտադրության հետ կապված ծառայություններ մատուցող Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած տնտեսվարող սուբյեկտ.

19) **նվազագույն շահավետ զին**՝ տնտեսապես հիմնավորված նվազագույն զին, որով պետության գնային կարգավորման բացակայության դեպքում մատակարարի կողմից կմատուցվեր ծառայությունը.

20) **շահառու**՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած տնտեսվարող սուբյեկտ, որին կարող է հատկացվել ֆինանսավորում՝ սույն օրենքի համաձայն.

21) **ստեղծագործական խումբ**՝ ֆիլմի ստեղծմանը մասնակցող աշխատախումբ, այդ թվում՝ սցենարի հեղինակ, բեմադրող կամ գլխավոր ռեժիսոր, բեմադրող կամ գլխավոր օպերատոր, բեմադրող կամ գլխավոր նկարիչ, երաժշտության հեղինակ, հնչյունային ռեժիսոր, մոնտաժի ռեժիսոր, մոնտաժող, անիմատոր, զգեստների նկարիչ, նկարիչ, դիմահարդար, առաջին, երկրորդ և երրորդ դերի դերասաններ.

22) **վարձութային վկայական**՝ ֆիլմի բնօրինակը, դրա պատճենը կամ օրինակները շրջանառության մեջ դնելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.

23) **տնտեսվարող սուբյեկտ**՝ կինեմատոգրաֆիայի ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ.

24) **ֆիլմ**՝ ստեղծագործական խմբի համատեղ գործունեության արդյունքում ստեղծագործական մտահղացման հիմքի վրա ստեղծված, կինոժապավենի կամ այլ տեսակի կրիչների վրա ամրագրված և համապատասխան տեխնիկական միջոցներով հանրությանը ներկայացնելու համար նախատեսված տեսալսողական ստեղծագործություն.

25) **ֆիլմ հանձնակատար**՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասում նշված պայմանները բավարարող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության՝ որպես ֆիլմարտադրության գրավիչ երկրի առաջխաղացումը, և ցուցաբերում է աջակցություն ֆիլմարտադրության տարբեր փուլերում.

26) **ֆիլմ տարածող (դիստրիբյուտոր)**՝ ֆիլմի տարածումն իրականացնող տնտեսվարող սուբյեկտ.

27) **ֆիլմ ցուցադրող**՝ ֆիլմի ցուցադրումը կազմակերպող տնտեսվարող սուբյեկտ.

28) **ֆիլմարտադրող**՝ ստեղծագործական խմբի հետ կնքված պայմանագրերի հիման վրա ֆիլմի նկատմամբ բացառիկ գույքային իրավունքներ ձեռք բերող տնտեսվարող սուբյեկտ, ով նախաձեռնում է ֆիլմարտադրությունը և պատասխանատվությունը կրում դրա համար.

29) **ֆիլմարտադրություն**՝ ֆիլմ ստեղծելու նպատակով ֆիլմարտադրողի կողմից իրականացվող գործունեություն՝ ստեղծագործական խմբի ներգրավմամբ, տեխնիկական և այլ միջոցների օգտագործմամբ.

30) **ֆիլմի բնօրինակ**՝ որակական չափանիշներով ֆիլմի հիմնանյութի ձևաչափին համապատասխանող ֆիլմի վերջնական հաստատված տարբերակի առաջին օրինակ.

31) **ֆիլմի հիմնանյութ**՝ նեգատիվ, հակատիպ, տեսահնչյունագրի, երաժշտության, ձայնային համադրման ու մագնիսային հնչյունագրերի բնօրինակ, վերստուգիչ պատճեն և նյութական կրիչի վրա պահվող ու ֆիլմի վերարտադրման համար անհրաժեշտ այլ նյութեր.

32) **Ֆիլմի նախագիծ**՝ ֆիլմի ստեղծման վերաբերյալ փաստաթղթերի ամբողջություն, որի հիման վրա ընդունվում է ֆիլմարտադրության կամ դրա ֆինանսավորման մասին որոշում:

33) **Ֆիլմի պահպանություն**՝ ֆիլմի հիմնանյութերի, ֆիլմի բնօրինակի կամ դրա պատճենի և ֆիլմի նախագծի երկարաժամկետ պահպանմանը, պահպանվածության ապահովմանն ու վերականգնմանն ուղղված գործունեություն:

34) **Ֆիլմի տարածում (դիստրիբյուցիա)**՝ ֆիլմը հանրության լայն շրջանակներին հասանելի դարձնելու գործընթաց:

35) **Ֆիլմի ցուցադրում**՝ ֆիլմի հրապարակային ցուցադրում կինոթատրոնում, հեռարձակում հաղորդալարով (ներառյալ՝ մալուխային կապը) կամ առանց հաղորդալարի (ներառյալ՝ հեռուստատեսային կամ արբանյակային կապը):

Հոդված 5. Կինեմատոգրաֆիայի պետական քաղաքականության սկզբունքները

1. Կինեմատոգրաֆիայի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝
 - 1) ստեղծագործողների ազատության երաշխավորումը.
 - 2) պետական աջակցության պարտադիրությունն ու անընդհատությունը.
 - 3) պետական աջակցության թափանցիկությունը.
 - 4) իրավական դաշտի կատարելագործումը և շահերի բախման կառավարելիությունը.
 - 5) բարենպաստ հարկային քաղաքականության ապահովումը.
 - 6) կինոարվեստի պահպանումը, տարածումն ու զարգացումը.
 - 7) ազգային ֆիլմերի ստեղծման և հանրահռչակման առաջնահերթությունը.
 - 8) կինոտարեգրության ստեղծման և ֆինանսավորման պարտադիրությունը.
 - 9) հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը:

Հոդված 6. Կինեմատոգրաֆիայի պետական աջակցության նպատակներն ու ձևերը

1. Կինեմատոգրաֆիայի պետական աջակցության նպատակներն են՝
 - 1) կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացումը.
 - 2) ազգային ֆիլմերի ստեղծումը, տարածումն ու պահպանությունը.
 - 3) կրթական, գիտական և տեղեկատվական համակարգերի զարգացումը.
 - 4) համատեղ արտադրության խթանումը.
 - 5) կինոժառանգության և կինոտարեգրության պահպանումը.
 - 6) օտարերկրյա ներդրումների ներգրավումը:
2. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցության ձևերն են՝
 - 1) ներդրումների իրականացումը և երաշխիքների տրամադրումը.
 - 2) աջակցող ենթակառուցվածքների ստեղծումը և զարգացումը.
 - 3) արտադրական և տեխնիկական անհրաժեշտ պայմանների ապահովումը.
 - 4) կինոարվեստին հաղորդակցվելու մատչելի պայմանների ստեղծումը.
 - 5) ֆինանսավորման բարենպաստ պայմանների ապահովումը.
 - 6) ֆիլմերի ստեղծման, տարածման և պահպանման ֆինանսավորումը.
 - 7) կինոփառատոների և կինոարվեստի այլ միջոցառումների ֆինանսավորումը.
 - 8) կինոարվեստի միջոցառումներին մասնակցության ապահովումը.
 - 9) օրենքով չարգելված այլ աջակցություն:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԼԻԱԶՈՐԿԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 7. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն)՝

1) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այսուհետ՝ պետական բյուջե) միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտին ֆինանսավորում (այսուհետ՝ պետական ֆինանսավորում) տրամադրելու կարգը.

2) հաստատում է ֆիլմի առաձին կատեգորիաների պետական ֆինանսավորման մասնաբաժինները և սահմանաչափերը.

3) հաստատում է հավաստագիր ու վարձուքային վկայական տրամադրելու և գործողությունը դադարեցնելու կարգը.

4) հաստատում է համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու և կարգավիճակը դադարեցնելու կարգը.

5) հաստատում է ֆիլմը դասակարգելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը.

6) հաստատում է դրամազլխին հատկացումներ կատարելու կարգը.

7) հաստատում է կինոռեզեստրը վարելու և ազգային ֆիլմի փաստաթղթերը մշտական պահպանության հանձնելու կարգը.

8) հաստատում է ֆիլմ հանձնակատարի որակավորման քննություններ անցկացնելու և ֆիլմ հանձնակատարներին գրանցելու կարգը.

9) իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 8. Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի լիազորությունները

1. Մշակույթի ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմին)՝

1) մշակում և իրականացնում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական քաղաքականությունը.

2) մշակում է կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերն ու հայեցակարգերը.

3) ապահովում է պայմաններ կինեմատոգրաֆիայի ոլորտի միջազգային համագործակցության զարգացման համար.

4) ապահովում է պայմաններ կինեմատոգրաֆիայի ոլորտի կրթական համակարգի զարգացման համար.

5) ապահովում է պայմաններ կինոարվեստի ստեղծագործության բոլոր տեսակների զարգացման համար.

6) ապահովում է պայմաններ ստեղծագործական ներուժի վերարտադրման, իրացման և երիտասարդ ստեղծագործողների լիարժեք ինքնադրսևորման համար.

7) ուսումնասիրում է հավաստագիր տրամադրելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և տրամադրում է հավաստագիր.

8) հաստատում է ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերի կազմն ու նվազագույն շահավետ գների հաշվարկման նորմատիվները.

9) հաստատում է կինեմատոգրաֆիայի ոլորտին պետական ֆինանսավորում հատկացնելու նպատակով մրցույթների կազմակերպման և անցկացման կանոնակարգը.

10) հաստատում է կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի (այսուհետ՝ ազգային մարմին) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) անդամների և ազգային մարմնի գործադիր տնօրենի (այսուհետ՝ տնօրեն) ընտրության կարգն ու գնահատման չափանիշները.

11) հաստատում է կինեմատոգրաֆիայի ոլորտի մասնագետների (այսուհետ՝ մասնագետ) գնահատման չափանիշները.

12) ապահովում է ֆիլմ հանձնակատարի որակավորման քննությունների անցկացումը և ֆիլմ հանձնակատարների գրանցումը.

13) իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 9. Ազգային մարմնի լիազորությունները

1. Ազգային մարմինն՝

1) ապահովում է շահերի բախման կառավարելիությունը.

2) ապահովում է կինոռեեստրի ստեղծումը և դրա հետագա վարումը.

3) ապահովում է կինոժառանգության և կինոտարեգրության պահպանումը.

4) ապահովում է անձեռնմխելի կապիտալի արդյունավետ կառավարումը.

5) ապահովում է պետական ֆինանսավորման նպատակով անցկացվող մրցույթների կազմակերպումը և հատկացված միջոցների նպատակային օգտագործման վերահսկումը.

6) համագործակցում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական և ոչ պետական կառույցների հետ մասնագետների պատրաստման և վերապատրաստման նպատակով.

7) աջակցում է ազգային ֆիլմերի ստեղծմանը, տարածմանն ու առաջխաղացմանը.

8) աջակցում է համատեղ արտադրության ֆիլմերի ստեղծմանը.

9) աջակցում է կինոարվեստի միջոցառումներին ազգային ֆիլմերի մասնակցությամբ.

10) աջակցում է կինոժառանգության վերականգնմանն ու թվայնացմանը.

11) ուսումնասիրում է ազգային ֆիլմի հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման, ինչպես նաև այդ ընթացքում գովազդի տեղադրման արդյունքում ստացված եկամուտների մասին տեղեկությունները և դրանց վերաբերյալ տալիս է եզրակացություն.

12) ուսումնասիրում է համատեղ արտադրության նախնական կամ վերջնական կարգավիճակ ստանալու համար ներկայացված փաստաթղթերը և տրամադրում համատեղ արտադրության նախնական կամ վերջնական կարգավիճակ.

13) ուսումնասիրում է վարձութային վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերը և տրամադրում վարձութային վկայական.

14) իրականացնում է օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

ԳԼՈՒԽ 3

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ, ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՏՆՕՐԵՆԸ

Հոդված 10. Ազգային մարմինը

1. Ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված մշակութային հիմնադրամ է, որն ունի բացառիկ լիազորություններ պետական ֆինանսավորման նպատակով մրցույթներ (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպելու և անցկացնելու գործում:

2. Ազգային մարմինը չի հանդիսանում ֆիլմարտադրող և չի կարող ձեռք բերել գույքային իրավունքներ իր կողմից կամ իր միջոցով ֆինանսավորված ֆիլմերի նկատմամբ, ինչպես նաև չի կարող իրականացնել ֆիլմարտադրության հետ կապված ձեռնարկատիրական գործունեություն ինքնուրույն կամ այլ տնտեսվարող սուբյեկտի միջոցով, որում ունի բաժնեմասնակցություն կամ հնարավորություն կանխորոշելու վերջինիս կառավարման մարմինների որոշումները կամ էապես ազդելու նրանց որոշումների կայացման վրա:

Հոդված 11. Ազգային մարմնի խորհուրդը

1. Ազգային մարմնի կառավարման բարձրագույն մարմինը յոթ անդամից բաղկացած խորհուրդն է, որում ընդգրկվում են՝

- 1) լիազորված պետական մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.
- 2) հանրային ֆինանսների կառավարման ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.
- 3) տնտեսության ճյուղերի զարգացման ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.
- 4) չորս մասնագետ (այդ թվում՝ օտարերկրյա)՝ մրցութային կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն երեք տարի ժամկետով խորհրդի անդամ է ընտրվում լիազորված պետական մարմնի սահմանած չափանիշների միավորների հանրագումարով առավելագույն բալեր հավաքած այն մասնագետը, ով ունի կինոարվեստի բնագավառում բարձրագույն կրթություն և բավարարում է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- 1) ստացել է կինոփառատոնի մրցանակ.
- 2) հանդիսանում է համատեղ արտադրության որևէ ծրագրի մրցանակակիր.
- 3) ունի կինոփառատոնի ժյուրիի անդամի աշխատանքի փորձ:

Հոդված 12. Ազգային մարմնի տնօրենը

1. Ազգային մարմնի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է մրցութային կարգով ընտրված տնօրենը:

2. Տնօրենի ընտրության մրցույթին կարող են մասնակցել արվեստի բնագավառում բարձրագույն կրթություն և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս քաղաքացիները:

3. Երեք տարի ժամկետով տնօրեն է ընտրվում լիազորված պետական մարմնի սահմանած չափանիշների միավորների հանրագումարով առավելագույն բալեր հավաքած տնօրենի պաշտոնի երեք հավակնորդներից այն թեկնածուն, ում՝ կինեմատոգրաֆիայի ոլորտի բարեփոխման և զարգացման ծրագիրն արժանանում է խորհրդի հավանությանը:

4. Տնօրենը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից, և նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել տնօրենի պաշտոնում:

ԳԼՈՒԽ 4

ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԸ, ԿԻՆՈՌԵՆՏՏՐԸ, ՖԻԼՄԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻԼՄԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 13. Ազգային ֆիլմը

1. Ֆիլմը համարվում է ազգային ֆիլմ, եթե բավարարում է հետևյալ պայմաններին.

1) ֆիլմի ստեղծագործական խմբի մեծամասնությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի,

2) ֆիլմի սցենարի հեղինակը և (կամ) բեմադրող ռեժիսորը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի,

3) ֆիլմարտադրությանը մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրող:

2. Սույն օրենքի ուժով ազգային ֆիլմ են համարվում նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստեղծված ու սույն հոդվածի 1-ին մասի պայմանները բավարարող ֆիլմերը, և այն ֆիլմերը, որոնց գույքային իրավունքները ժառանգաբար համապարփակ իրավահաջորդության կարգով փոխանցվել են Հայաստանի Հանրապետությանը:

Հոդված 14. Կինոռեեստրը, ֆիլմի պահպանությունը և ֆիլմի նկատմամբ գույքային իրավունքները

1. Ազգային ֆիլմերի, դրանց ստեղծագործական խմբի անդամների ու ֆիլմարտադրողների մասին տվյալները ազգային մարմինը հավաքագրում և գրանցում է կինոռեեստրում՝ կառավարության սահմանած կարգով:

2. Ֆիլմի պահպանությունը, հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների պաշտպանությունը և կինոժառանգության հանրային օգտագործումը կազմակերպելու նպատակով ազգային ֆիլմի փաստաթղթերը, այդ թվում՝ ֆիլմի հիմնանյութերն ու ֆիլմի բնօրինակը հանձնվում են մշտական պահպանության՝ կառավարության սահմանած կարգով:

3. Ֆիլմի ստեղծման մասին ֆիլմարտադրողի հետ կնքված պայմանագրով ֆիլմի գույքային իրավունքներն անցնում են ֆիլմարտադրողին՝ վերջինիս կողմից ֆիլմի ստեղծման մասին պայմանագրի հիման վրա ստեղծագործական խմբի անդամներին վճարված հեղինակային վարձատրության (ռոյալթի) դիմաց:

ԳԼՈՒԽ 5

ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՖԻԼՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ

Հոդված 15. Ֆիլմարտադրությունը

1. Հայաստանի Հանրապետության հանրային տարածքներում ֆիլմարտադրությունն իրականացվում է հասարակական կարգի պահպանման, անվտանգության, անխափան երթևեկության և ազատ տեղաշարժի ապահովման, այլոց առողջության և իրավունքների պաշտպանության, գույքին հասցված վնասների, ընդհանուր պատասխանատվության և դժբախտ պատահարներից ապահովագրության, պետական կամ հանրային գույքի օգտագործման և բնության պահպանության հետ կապված օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջներն ապահովվելու նպատակով ֆիլմարտադրողը կարող է նշանակել ֆիլմ հանձնակատար:

3. Ֆիլմ հանձնակատար կարող են լինել՝

1) Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր կառավարության սահմանած կարգով հանձնել են ֆիլմ հանձնակատարի որակավորման քննություն լիազորված պետական մարմնում.

2) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք, որոնցում աշխատում է սույն մասի 1-ին կետի պահանջներին համապատասխանող առնվազն մեկ անձ:

Հոդված 16. Ֆիլմի տարածումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմի տարածումն իրականացվում է վարձուքային վկայականի հիման վրա:

2. Վարձուքային վկայական տրամադրվում է, եթե ֆիլմը բավարարում է հետևյալ պայմաններին.

1) կատարված է ֆիլմի դասակարգումը և տարիքային սահմանափակման մասին համապատասխան նշումը՝ կառավարության սահմանած կարգով,

2) կատարված է օտարալեզու ֆիլմի հայերեն կրկնօրինակումը և (կամ) տեսանելի ու հստակ ենթագրումը, բացառությամբ՝ ֆիլմում հնչող երաժշտական ստեղծագործությունների և այն դրվագների, որոնք էական չեն կամ ըստ ստեղծագործական մտահղացման պետք է լինեն օտարալեզու:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջը չի տարածվում

1) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող գիտական, մշակութային, կրթական, ճանաչողական ու այլ նմանատիպ ծրագրերի և օտար լեզուների իմացության բարելավման կամ ուսուցման համար նախատեսված ֆիլմերի վրա.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և կինոփառատոների ու կինոարվեստի այլ միջոցառումների շրջանակում ցուցադրման համար նախատեսված ֆիլմերի վրա.

3) արբանյակային կամ մալուխային կապի միջոցով հեռարձակվող ֆիլմերի վրա:

Հոդված 17. Ֆիլմի ցուցադրումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ազգային ֆիլմերի ցուցադրումը մեկ հեռարձակողի կամ մեկ կինոթատրոնի կողմից չի կարող պակաս լինել ամսական ֆիլմերի ցուցադրման ընդհանուր քանակի 15 տոկոսից:

2. Ազգային ֆիլմի հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման, ինչպես նաև դրա ընթացքում գովազդի տեղադրման արդյունքում ստացված եկամուտների 10 տոկոսը ֆիլմ ցուցադրողները հատկացնում են դրամազլխին՝ կառավարության սահմանած կարգով:

3. Ֆիլմ ցուցադրողները ազգային մարմնին ներկայացնում են ազգային ֆիլմի հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման, ինչպես նաև դրա ընթացքում գովազդի տեղադրման արդյունքում ստացված եկամուտների մասին տեղեկություններ՝ կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՎԱՍՏԱԳՐԻ, ՎԱՐՁՈՒԹԱՅԻՆ ՎԿԱՅԱՎԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՍԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՂԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հոդված 18. Հավաստագրի տրամադրումն ու գործողության դադարեցումը

1. Հավաստագիր ստանալու համար մինչև ֆիլարտադրություն իրականացնելը ֆիլմարտադրողը լիազորված պետական մարմին է ներկայացնում.

- 1) հավաստագիր ստանալու հայտ,
- 2) ֆիլմարտադրության ժամանակացույցը,
- 3) ֆիլմի նախահաշիվը,
- 4) ֆինանսավորման պլանը և ֆինանսավորումը հավաստող փաստաթղթերը:

2. Հավաստագրի տրամադրման հայտը մերժվում է, եթե՝

- 1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.
- 2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.
- 3) ներկայացված փաստաթղթերը թերի են, և տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում.

4) ֆիլմարտադրողը նախկինում խախտել է օրենքով սահմանված պահանջները:

3. Հավաստագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝

- 1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.
- 2) խախտվել է սույն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.
- 3) ներկայացվել է հավաստագրի գործողությունը դադարեցնելու դիմում:

4. Հավաստագիրը տրամադրում է լիազորված պետական մարմինը՝ կառավարության սահմանած կարգով:

Հոդված 19. Վարձութային վկայականի տրամադրումն ու գործողության դադարեցումը

1. Վարձութային վկայական ստանալու համար մինչև ֆիլմի տարածումն իրականացնելը ֆիլմ տարածողը ազգային մարմին է ներկայացնում.

- 1) վարձութային վկայական ստանալու հայտ,
- 2) հեղինակային իրավունքի վերաբերյալ հայտարարություն,
- 3) ֆիլմի դասակարգման վերաբերյալ հայտարարություն,
- 4) ֆիլմի ծայնային ներկայացման վերաբերյալ հայտարարություն,
- 5) օտարալեզու ֆիլմի կրկնօրինակման և (կամ) ենթագրման վերաբերյալ հայտարարություն:

2. Վարձութային վկայականի տրամադրման հայտը մերժվում է, եթե՝

- 1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.
- 2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.
- 3) ներկայացված փաստաթղթերը թերի են, և տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում:

3. Վարձութային վկայականի գործողությունը դադարեցվում է, եթե՝

- 1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.
- 2) խախտվել է սույն օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները:

4. Վարձութային վկայականը տրամադրում է ազգային մարմինը՝ կառավարության սահմանած կարգով:

Հոդված 20. Համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրումն ու գործողության դադարեցումը

1. Համատեղ արտադրության նախնական կարգավիճակ ստանալու համար մինչև ֆիլմի նկարահանումն իրականացնելը ֆիլմարտադրողն ազգային մարմին է ներկայացնում.

- 1) համատեղ արտադրության նախնական կարգավիճակ ստանալու հայտ,

- 2) հեղինակային իրավունքի վերաբերյալ հայտարարություն,
 - 3) ֆիլմի համառոտ նկարագիրը,
 - 4) ֆիլմարտադրության նախնական ժամանակացույցը,
 - 5) ֆիլմի ստեղծագործական և տեխնիկական ներդրումների նախնական ցուցակը,
 - 6) ֆիլմի նախահաշիվը,
 - 7) ֆինանսավորման նախնական պլանը,
 - 8) համատեղ արտադրության պայմանագիրը կամ համագործակցության հուշագիրը:
2. Համատեղ արտադրության վերջնական կարգավիճակ ստանալու համար ֆիլմի նկարահանման ավարտից հետո ֆիլմարտադրողն ազգային մարմին է ներկայացնում.
- 1) համատեղ արտադրության վերջնական կարգավիճակ ստանալու հայտ,
 - 2) հեղինակային իրավունքի պայմանագրերի ամբողջական փաթեթը,
 - 3) ֆիլմի վերջնական սցենարը,
 - 4) ֆիլմի ստեղծագործական և տեխնիկական ներդրումների վերջնական ցուցակը,
 - 5) ֆիլմի ծախսերի հաշվետվությունը,
 - 6) ֆինանսավորման վերջնական պլանը,
 - 7) համատեղ արտադրության պայմանագիրը:
3. Համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման հայտը մերժվում է, եթե՝
- 1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.
 - 2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.
 - 3) ներկայացված փաստաթղթերը թերի են, և տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում:
4. Համատեղ արտադրության կարգավիճակը դադարեցվում է, եթե՝
- 1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.
 - 2) խախտվել է սույն օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.
5. Համատեղ արտադրության կարգավիճակը տրամադրում է ազգային մարմինը՝ կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 7

ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՈՒՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԴՐԱՄԱԳՆԻՔԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 21. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցությունը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմարտադրության նպատակով 100 միլիոն ՀՀ դրամ և ավելի ներդրում կատարելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ հավաստագիր և դրա հիման վրա մատակարարներից ձեռք բերել ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն մատակարարի չստացած եկամուտը (նվազագույն շահավետ գնի և 20 տոկոս ցածր գնի տարբերությունը) փոխհատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ կառավարության սահմանած կարգով:

3. Ֆիլմարտադրության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք իրավունք ունեն ֆիլմի նախագծով հաստատված ժամկետի ընթացքում առանց մուտքի վիզայի գտնվել

Հայաստանի Հանրապետության տարածքում և առանց աշխատանքի թույլտվության մասնակցել ֆիլմարտադրության աշխատանքներին՝ կառավարության սահմանած կարգով:

4. Ֆիլմարտադրության և կինոարվեստի միջոցառումների շրջանակներում ապրանքների ժամանակավոր ներմուծման ու արտահանման դեպքում գործում է հայտարարագրման պարզեցված կարգ և սահմանվում է հայտարարագրի ընդունման պահից չորս ժամվա ընթացքում ապրանքների բաց թողնման ժամկետ՝ առանց մաքսային վճարների վճարման:

5. Աջակցություն տրամադրողների հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում է դրամազլիսին կատարվող հատկացումների գումարը:

6. Շահառուներին տրամադրվող պետական ֆինանսավորման գումարները եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ դրանք կամ դրանցով ձեռք բերված կամ ստեղծված ակտիվները ձանաչվում են որպես ծախս:

7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ֆիլմ ցուցադրողների հարկման բազայի որոշման նպատակով եկամուտ չեն համարվում ազգային ֆիլմի հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման, ինչպես նաև դրա ընթացքում գովազդի տեղադրման արդյունքում ստացվող եկամուտները:

Հոդված 22. Պետական ֆինանսավորումը

1. Պետական ֆինանսավորումն իրականացվում է լիազորված պետական մարմնի հաստատած ծրագրով՝ տվյալ տարվա պետական բյուջեով ֆիլմարտադրության, ֆիլմերի տարածման ու հանրահեռակման, կինոժառանգության պահպանման ու վերականգնման, ազգային մարմնի ընթացիկ գործունեության և այլ միջոցառումների ֆինանսավորման համար նախատեսված առանձին միջոցների հաշվին:

2. Պետական ֆինանսավորումը չի հանդիսանում պետական պատվեր:

3. Ֆիլմարտադրության պետական ֆինանսավորումն իրականացվում է կառավարության կողմից հաստատված մասնաբաժնի ու սահմանաչափի համաձայն, որոնք սահմանվում են առանձին՝ ըստ.

- 1) խաղարկային, վավերագրական և անիմացիոն անվանակարգերի,
- 2) լիամետրաժ ֆիլմ և կարճամետրաժ ֆիլմ տեսակների,
- 3) ֆիլմի զարգացման, արտադրության և հետարտադրության փուլերի,
- 4) ազգային ֆիլմ և համատեղ արտադրության ֆիլմ կարգավիճակների,
- 5) դեբյուտային ֆիլմ և այլ ծրագրերի,
- 6) մանկապատանեկան ֆիլմ և այլ քվոտաների:

4. Պետական ֆինանսավորման համար նախատեսված միջոցները տվյալ տարվա ընթացքում ամբողջությամբ շահառուներին չտրամադրելը հիմք չէ հաջորդ տարիների պետական ֆինանսավորման նպատակով միջոցներ չնախատեսելու կամ պակաս նախատեսելու համար:

5. Պետական ֆինանսավորման համար նախատեսված և տվյալ տարվա ընթացքում շահառուներին չտրամադրված գումարները հատկացվում են դրամազլիսին, որպես հիմնադրի կողմից կատարվող ներդրում:

Հոդված 23. Պետական ֆինանսավորման նպատակով մրցույթի անցկացման կարգը

1. Ֆիլմարտադրության պետական ֆինանսավորումն իրականացվում է կառավարության սահմանած կարգով անցկացվող մրցույթի արդյունքներով:

2. Մրցույթներն անցկացվում են տարեկան առնվազն երկու անգամ՝ ազգային մարմնի սահմանած ժամանակացույցի համաձայն:

3. Լիազորված պետական մարմնի հաստատած կանոնակարգի համաձայն ձևավորվում են ֆիլմի՝ երկու կամ ավելի կատեգորիաներում անցկացվող առանձին մրցույթների՝ առնվազն հինգ անդամից բաղկացած հանձնախմբեր:

4. Հանձնախմբի անդամ է ընտրվում լիազորված պետական մարմնի սահմանած չափանիշների միավորների հանրագումարով առավելագույն բալեր հավաքած այն մասնագետը (այդ թվում՝ օտարերկրյա), ով ունի կինոփառատոնի ժյուրիի անդամի աշխատանքի փորձ և արվեստի բնագավառում բարձրագույն կրթություն, կամ ստացել է կինոփառատոնի մրցանակ և բավարարում է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

1) ունի կինոփառատոնի ժյուրիի անդամի աշխատանքի փորձ.

2) ունի համատեղ արտադրություն իրականացնելու փորձ.

3) հանդիսանում է համատեղ արտադրության որևէ ծրագրի՝ պաշտոնական ընտրությունն անցած մասնակից:

5. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրողները:

6. Մրցույթին ներկայացված հայտերը պետք է առնվազն բավարարեն հետևյալ պայմաններին.

1) առկա է սցենարի հիմքի վրա ֆիլմ ստեղծելու իրավունք,

2) ֆիլմարտադրությանը մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրող,

3) ստեղծագործական խմբում ընդգրկված է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

7. Մրցույթին ներկայացված հայտերը գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

1) ֆիլմի գեղագիտական-գեղարվեստական արժեքը.

2) ֆիլմի միջազգային ճանաչման հնարավորությունը.

3) ֆիլմի նախագծի իրականացվելիության ներուժը.

4) ֆիլմի նախագծի տնտեսական հիմնավորումը.

5) ֆիլմի առաջխաղացման և հանրությանը ներկայացման հեռանկարը:

Հոդված 24. Դրամազվիսի հաշվին ֆինանսավորումը

1. Դրամազվիսի հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորումն իրականացվում է խորհրդի հաստատած տարեկան ծրագրով՝ դրամազվիսի կառավարումից ստացված եկամուտների հաշվին:

2. Դրամազվուխը հանդիսանում է անձեռնմխելի կապիտալ, որի կառավարումից ստացված եկամուտները տրամադրվում են շահառուներին՝ բացառապես ազգային ֆիլմերի ստեղծման, հանրությանը ներկայացման և կինոժառանգության պահպանման նպատակով:

3. Դրամազվիսի միջոցները կառավարելու նպատակով ազգային մարմինը բացում է հաշիվ կենտրոնական գանձապետարանում և վարում է առանձնացված հաշվառում՝ դրանց մասին տեղեկություններն արտացոլելով խորհրդին ներկայացվող հաշվետվություններում:

ԳԼՈՒԽ 8

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 25. Միջազգային համագործակցությունը

1. Կինեմատոգրաֆիայի միջազգային համագործակցությունն իրականացվում է միջազգային պայմանագրերի և օրենքի համաձայն, որը նախատեսում է՝

- 1) համատեղ արտադրության իրականացում.
- 2) օտարերկրյա պետություններում կազմակերպվող կինոփառատոներին և կինոարվեստի այլ միջոցառումներին ազգային ֆիլմերի մասնակցության ապահովում.
- 3) օտարերկրյա պետություններում ազգային ֆիլմի օրերի, շաբաթների և կինոարվեստի այլ միջոցառումների կազմակերպում.
- 4) Հայաստանի Հանրապետությունում անցկացվող կինոփառատոների և կինոարվեստի այլ միջոցառումներին օտարերկրյա ֆիլմարտադրողների և միջազգային կազմակերպությունների մասնակցության ապահովում.
- 5) միջազգային համագործակցության այլ ձևեր:

Հոդված 26. Համատեղ արտադրությունը

1. Ֆիլմարտադրությունը համարվում է համատեղ արտադրություն, եթե բավարարում է հետևյալ պայմաններին.

- 1) ներառում է ֆիլմարտադրության ստեղծագործական և տեխնիկական փաստացի ներդրումների մեջ առավելագույն մասնակցություն ունեցող ֆիլմարտադրող, որը բավարարում է իր երկրում համատեղ արտադրության ֆիլմը որպես ազգային ֆիլմ ճանաչելու պայմանները,
- 2) ներառում է ֆիլմարտադրության ստեղծագործական և տեխնիկական փաստացի ներդրումների մեջ նվազագույն մասնակցություն ունեցող մեկ կամ մի քանի ֆիլմարտադրող,
- 3) առկա է համատեղ արտադրության պայմանագիր, որն ունի եկամուտների բաշխմանը վերաբերող դրույթներ:

2. Համատեղ արտադրության ֆիլմերն օգտվում են սույն օրենքի համաձայն ազգային ֆիլմին վերապահվող առավելություններից:

ԳԼՈՒԽ 9

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 27. Սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, 17-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 10

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 28. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2030 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 10-23-րդ հոդվածների դրույթները գործելու են դրանք կանոնակարգող կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

3. Սույն օրենքով նախատեսված կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը պետք է ընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում:

4. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

5.

6. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-910-26.03.2021-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1.	2.	3.	4.	5.
1.	Կառավարություն	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ, 10-րդ հոդվածի 1-ին մաս, 17-րդ հոդվածի 2-րդ մաս, 22-րդ հոդվածի 5-րդ մաս և 23-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 10-րդ հոդվածի 1-ին մասով, 17-րդ հոդվածի 2-րդ մասով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ դրամագլխի և ազգային մարմնի վերաբերյալ կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանում ազգային մարմնի անվամբ նախատեսվում է բացել արտաբյուջետային հաշիվ (դրամագլուխ), որից հատկացված միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողությունը և ֆինանսավորման իրականացումը պետք է ապահովվի ազգային մարմնի կողմից: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ առաջարկվող կարգավորումները սկզբունքորեն անընդունելի են հանրային ֆինանսների կառավարման բնագավառում կառավարության կողմից իրականացվող քաղաքականության համատեքստում: Այսպես՝ իր գործունեության ծրագրով կառավարությունը նպատակ է դրել վերանայել պետական կամ համայնքային հիմնարկների արտաբյուջետային հաշիվներ ունենալու քաղաքականությունը՝ ապահովելով սահմանված դեպքերում առաջացող դրամական միջոցների մուտքը համապատասխան բյուջե և հետագայում, ըստ անհրաժեշտության, այդ գումարների բաշխումն այդ բյուջեներից:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և դրամագլուխը սահմանվել է՝ որպես անձեռնմխելի կապիտալ, որը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի համաձայն կարող է կառավարվել բացառապես պետական պարտատոմսերում ներդրումներ կատարելու, դրանց տոկոսավճարներից և մարումից եկամուտներ ստանալու և ստացված եկամուտները հոգաբարձուների խորհրդի հաստատած ծրագրով օգտագործելու միջոցով:	Ընդունվել է:

2.	Կառավարություն	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 10-րդ հոդվածի համաձայն՝ Կինեմատոգրաֆիայի ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված անդամություն չունեցող «Հայֆիլմ» ինստիտուտ անվանումով ոչ առևտրային կազմակերպություն է: Այս առումով նախագծի դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների կարգավորումներին՝ պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի վերաբերյալ:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և «ոչ առևտրային կազմակերպություն» եզրույթը փոխարինվել է «հիմնադրամ» եզրույթով	Ընդունվել է:
3.	Կառավարություն	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 11-րդ հոդվածում ընդգրկված են հիմնավորումներ, ինչպիսիք են՝ «միջազգային կարգավիճակ ունեցող կինոփառատոն» (միջազգային են ինչպես Կաննի կինոփառատոնը, այնպես էլ Ամուրի կինոփառատոնը), «օտարերկրյա մասնագետ» և այլ հասկացություններ, որոնք շահարկումների և տարընթերցումների առիթ են ստեղծում: Վերոգրյալի համատեքստում նախագծի հիշյալ դրույթներն անհրաժեշտ է խմբագրել:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և «միջազգային» եզրույթը հանվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ	Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում առնվազն 100 միլիոն դրամ ներդրմամբ ֆիլմարտադրություն իրականացնելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ հավաստագիր և ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները հավաստագրի հիման վրա ձեռք բերել մատակարարից դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով: Վերոնշյալ իրավակարգավորումների համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ ազատ շուկայական տնտեսավարման պայմաններում հավաստագրի հիման վրա մատակարարից ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու հնարավորության նախատեսումը խնդրահարույց է՝ հատկապես այն պարագայում, երբ նախագծի բովանդակությունից պարզ չէ, թե նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ծառայություն ձեռք բերելու պարագայում	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և սահմանվել է, որ մատակարարի չստացած եկամուտը փոխհատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին	Ընդունվել է:

			ծառայությունների մատուցման արդյունքում համապատասխան սուբյեկտի կրած վնասը կամ դրա փոխհատուցումն ինչ սկզբունքով և ում կողմից է իրականացվելու:		
5.	Կառավարություն	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	«Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի նախագծում նպատակային է ընդգրկել նաև ֆիլմհանձնակատարի գրասենյակի վերաբերյալ դրույթները, որոնք ֆիլմարտադրողների խնդիրները կարգավորում են մեկ պատուհանի սկզբունքով:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացումը	Ընդունվել է:
6.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ	«Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ «10) կինոժառանգություն՝ ժառանգված, պահպանված, հաջորդ սերունդներին փոխանցվող և հանրային սեփականություն հանդիսացող ֆիլմի հիմնանյութ, ֆիլմի բնօրինակ կամ բնօրինակ պատճե, ֆիլմի ստեղծման համար անհրաժեշտ պարագաներ, շարժական և անշարժ գույք.»։ Նշվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ հասկանալի չէ «բնօրինակ պատճե» եզրույթը: Հետևաբար, իրավակիրառ պրակտիկայում որոշակիության հետ կապված խնդիրներից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծում սահմանել վերջինիս հասկացությունը:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և «բնօրինակ պատճե» եզրույթը փոխարինվել է «ֆիլմի բնօրինակի պատճե» եզրույթով, քանի որ նախածոմում արդեն իսկ սահմանված է «ֆիլմի բնօրինակ» եզրույթը	Ընդունվել է:
7.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի համաձայն՝ «ֆիլմի վարձույթ՝ ֆիլմի բնօրինակի, բնօրինակ պատճենների կամ օրինակների սահմանափակ ժամանակահատվածով <u>օգտագործման</u> տրամադրում.»։ Հարկ է նկատել, որ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքի իմաստով <u>վարձույթ է համարվում ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների սահմանափակ ժամանակահատվածով օգտագործման տրամադրումը՝ ուղղակի կամ անուղղակի տնտեսական կամ առևտրային օգուտ ստանալու նպատակով</u> »։ Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետում արտացոլել	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և «ֆիլմի վարձույթ» հասկացությունը փոխարինվել է «ֆիլմի տարածում» հասկացությամբ:	Ընդունվել է:

			վարձույթի կարևոր հատկանիշներից մեկը, այն է՝ օգտագործման տրամադրումը՝ տնտեսական կամ առևտրային օգուտ ստանալու նպատակով:		
--	--	--	---	--	--

8.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մաս և 1-ին մասի 3-րդ կետ	Նախագծի 7-րդ հոդվածի վերնագրում և Նախագծի ամբողջ տեքստում նշված «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերն իրենց հոլովածներով առաջարկում ենք փոխարինել «Կառավարության» բառով՝ իր համապատասխան հոլովածներով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումները և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով: Այնուհետև անհրաժեշտություն կառաջանա Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասից հանել «(այսուհետ՝ կառավարություն)» ձևակերպումը և ամբողջ տեքստում «կառավարություն» բառը իր հոլովածներով նշել մեծատառով: Սույն կետով նշված հիմնավորմամբ առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը և «(այսուհետ՝ պետական բյուջե)» ձևակերպումը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:
9.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետեր	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված է, որ Կառավարությունը հաստատում է հավաստագիր տրամադրելու կարգը և վարձույթի վկայական տրամադրելու կարգը: Նշված կետերում առաջարկում ենք «տրամադրելու» բառից հետո լրացնել «և գործողությունը դադարեցնելու» բառերը, քանի որ Նախագծի 22-րդ և 23-րդ հոդվածներով նախատեսված են հավաստագրի և վարձույթի վկայականի տրամադրման և գործողության դադարեցման հիմքերը, որոնցից բխող ընթացակարգային նորմերը կարծում ենք պետք է ամրագրվեն Կառավարության կողմից հաստատվող վերոնշյալ կարգերով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:
10.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 8-	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում առաջարկում ենք «խորհրդի» բառից հետո լրացնել «անդամի» բառը՝ հաշվի առնելով Նախագծի 11-րդ	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

	վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ	հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև այն, որ խորհրդի 7 անդամներից չորսն ընտրվում են լիազոր մարմնի կողմից:		
--	---	----------------------------------	--	--	--

11.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 9- րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Կինեմատոգրաֆիայի ոլորտում ազգային մարմինը (այսուհետ՝ ազգային մարմին)՝ (...) 4) ապահովում է պայմաններ ոլորտի կրթական համակարգի զարգացման համար»: Հարկ է նկատել, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 9-րդ կետի համաձայն կրթական ամբողջ համակարգի զարգացումը դրված է Կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վրա, մինչդեռ Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ոլորտի կրթական համակարգի զարգացման պայմանների ապահովման լիազորությունը կրում է կինեմատոգրաֆիայի ոլորտում ազգային մարմինը: Հետևաբար, առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանեցնել «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 9-րդ կետին:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը և այդ լիազորությունը ազգային մարմնից տեղափոխվել է լիազորված պետական մարմին	Ընդունվել է:
12.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 9- րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Կինեմատոգրաֆիայի ոլորտում ազգային մարմինը (այսուհետ՝ ազգային մարմին)՝ (...) 4) ապահովում է պայմաններ ոլորտի կրթական համակարգի զարգացման համար»: Հարկ է նկատել, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 9-րդ կետի համաձայն կրթական ամբողջ համակարգի զարգացումը դրված է Կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վրա, մինչդեռ Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ոլորտի կրթական համակարգի զարգացման պայմանների ապահովման լիազորությունը կրում է կինեմատոգրաֆիայի ոլորտում ազգային մարմինը: Հետևաբար, առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը և այդ լիազորությունը ազգային մարմնից տեղափոխվել է լիազորված պետական մարմին	Ընդունվել է:

			1-ին մասի 4-րդ կետը համապատասխանեցնել «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 9-րդ կետին:		
--	--	--	---	--	--

13.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասի	Նախագծի 13-րդ հոդվածի վերջին մասում նշված կարգավորումն այն մասին, որ օրենքի ուժով ազգային ֆիլմի կարգավիճակ են ստանում նաեւ հոդվածի 1-ին մասի պահանջը բավարարող եւ մինչեւ օրենքն ուժի մեջ մտնելը ստեղծված ֆիլմերը, այդ թվում՝ համատեղ արտադրության, անհրաժեշտ է կարգավորել Նախագծի անցումային դրույթներով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:
14.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի	Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասում, Նախագծի տեքստում և Նախագծերի փաթեթի մյուս նախագծերում նշված «ազգային արխիվ» բառերն առաջարկում ենք փոխարինել «պետական արխիվ» բառերով՝ հիմք ընդունելով «Արխիվային գործի մասին» օրենքով սահմանված կարգավորումները, մասնավորապես՝ 3-րդ հոդվածի 12-րդ կետը, 7-րդ և 8-րդ հոդվածները:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:
15.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժին	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 16-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետության հանրային տարածքներում ֆիլմի նկարահանում թույլատրվում է պետական կամ հանրային գույքի օգտագործման, բնության պահպանության, հասարակական կարգի պահպանման, անվտանգության, անխափան երթևեկության և ազատ տեղաշարժի ապահովման, այլոց առողջության և իրավունքների պաշտպանության, ինչպես նաև ընդհանուր պատասխանատվության և դժբախտ պատահարներից ապահովագրության հետ կապված օրենքով նախատեսված պահանջները կառավարության սահմանած կարգով բավարարելու դեպքում: Կարծում ենք, որ Նախագծի 16-րդ հոդվածը կարող է հակասություն առաջացնել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի հետ:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և սահմանել, որ նշված գործառնությունների կատարումը ֆիլմարտադրողը կարող է պատվիրակել ֆիլմ հանձնակատարին	Ընդունվել է:
16.	Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության	«Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 20-րդ հոդվածի 3-րդ	Նախագծի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Պետական ֆինանսավորումն իրականացվում է ֆիլմի առանձին կատեգորիաների համար հաստատված մասնաբաժինների և	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

	պետաիրավական փորձաքննության բաժին	մասի 2-րդ կետ	սահմանաչափերի համաձայն, որոնք սահմանում է կառավարությունն՝ ըստ. 2) <u>առավելագույն և նվազագույն չափով մասնակցության կարգավիճակի</u> ,»։ Կարծում ենք վերոնշյալ իրավադրույթը հստակեցման և որաշկիացման կարիք ունի, մասնավորապես հասկանալի չէ ինչ է իրենից ենթադրում առավելագույն և նվազագույն չափով մասնակցության կարգավիճակը։ Անհրաժեշտություն է առաջանում նշել, որն է առավելագույն և նվազագույն չափով մասնակցությունը։		
--	---	---------------	--	--	--